«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Արժեհամակարգի ձևավորումը դեկորատիվ-կիրառական արվեստի և դրա տեսակների միջոցով տեխնոլոգիայի դասաժամերին

ԱՌԱՐԿԱ Տեխնոլոգիա

ՀԵՂԻՆԱԿ Հռիփսիմե Գևորգյան

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գյումրու «Ֆոտոն» վարժարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գլուխ 1. <<Ասեղնագործությունը>> գեղեցիկի չափանիշ է, սեփական հմտություն և վարպետություն……5

1.1 Հին հայկական ասեղնագործություն……6

1.2 Վան-Վասպուրական ասեղնագործություն……8

1.3 Շիրակ-Կարին ասեղնագործություն……8

1.4 Սյունիք-Արցախ ասեղնագործություն……9

1.5 Արարատի ասեղնագործություն……9

1.6 Ուրֆայի ասեղնագործություն…….. 10

1.7 Թբիլիսիի հայկական ասեղնագործություն……11

1.8 Մարաշի ասեղնագործություն……..12

1.9 Այնթափի ասեղնագործություն……13

ԳԼՈՒԽ 2. Ասեղնակարերի տեսակները…… 14

2.1 Նյութեր և հարմարանքներ…….. 15

2.2 Ձեռքի կարի մի քանի տեսակներ……. … 16

2.3 Ձարդակարեր……17

Եզրակացություն……..18

Գրականություն…… 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Աշխատանքը օգնում է կրթվելուն, կրթությունը օգնում է աշխատանքին: Ապագան այսուհետև պատկանում է երկու տիպի մարդկանց՝ մտածող մարդուն և աշխատող մարդուն>>:

Վ.Հյուգո

Աշխատանքը վերաբերում է դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղերից մեկին՝ ասեղնագործությանը:

Ասեղնագործությունը լայն տարածում է ունեցել նաև Հայաստանում՝ դեռևս հնագույն ժամանակներից և իր զարգացման գագաթնակետին է հասել միջնադարում:

Դեկորատիվ-կիրառական արվեստի այս ճյուղն արտահայտում է հնագույն ժամանակներից եկող կրոնական պատկերացումներն ու հավատալիքները, գեղագիտական ընկալումները, հայերի համար նախընտրելի ոճային, հորինվածքային առանձնահատկությունները, տարատեսակների և զարդանախշերի անսպառ բազմազանությունը:Հնագույն շրջանի ասեղնագործ նմուշները ցավոք մեզ չեն հասել և դրանց մասին պատկերացում ենք կազմում ազգագրական այլ աղբյուրներից:

Պատմական ակնարկի միջոցով ներկայացրել եմ ասեղնագործության անցած ուղին սկսած միջնադարից մինչև մեր օրերը:

Աշխատանքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ասեղնագործության լավագույն և ամենատարածված տեսակները, ուղղություններն ու նմուշները:

Հազարամյակներ շարունակ մարդիկ ստեղծել և զարգացրել են ասեղնագործության նոր ձևեր ու մեթոդներ:

Այժմ այն նորից արդիական է և լայնորեն կիրառվում է տարբեր բնագավառներում: Ավանդական մոտեցումները զուգակցվում են ժամանակակից տեխնոլոգիաներով, և ասեղնագործությունը դառնում է դեկորատիվ-կիրառական արվեստի լավագույն տեսակներից մեկը:

Նպատակները

- Ձևավորել մշակույթի և ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունները դեկորատիվ-կիրառական արվեստի միջոցով 5-7 դասարանների մոտ տեխնոլոգիայի՝ դասաժամերին:

- Աշակերտների մոտ ձևավորել գեղագիտական ճաշակ, երևակայություն, ստեղծագործելու հմտություններ:
- Բացահայտվել են ՏՀՏ կիրառությամբ տեղեկություններ թեմայի վերաբերյալ
- Ընդլայնել պատկերացումները ասեղնագործության վերաբերյալ

ԳԼՈՒԽ 1

Ասեղնագործությունը գեղեցիկի չափանիշ է, սեփական հմտություն և վարպետություն

Հայ ժողովրդի մշակութային գանձարանում աչքի ընկնող տեղ է գրավում կիրառական արվեստի մի ճյուղը կազմող գեղարվեստական ստեղծագործությունը՝ ձեռագործը:

Հայերը վաղ ժամանակներից ծանոթ են եղել և՛ հասարակ և՛ բարդ ասեղնակարերի հետ:Շնորհիվ ասեղ-թելի, ասեղնակարերի, զարդանկարների գործվածքը դառնում է զարդարանք:

Բազմաբովանդակ, բազմաճյուղ ասեղնագործ արվեստը արտահայտչական հարուստ հնարավորություններ ունի:

Ասեղնագործությունը ժողովրդի հանճարի, արարող ձեռքի վկայությունն է: Այստեղ, ավելի քան մշակույթի որևէ այլ բնագավառում, հստակորեն դրսևորվում է տվյալ ժողովրդի եղարվեստական ճաշակը, երևակայությունը, մարդուն շրջապատող արտաքին աշխարհի գեղեցկության գեղագիտական ընկալման կարողությունը:

Ասեղնագործությունը դեկորատիվ կիրառական արվեստի հնագույն, բայց և կենսունակ բնագավառներից մեկն է: Այն միաժամանակ արվեստի ամենամասսայական ձևերից է՝ իր ստեղծմամբ, տարածմամբ, դերով և նշանակությամբ:

Հայկական ասեղնագործ [1] արվեստը մեծ տեղ է գրավում ոչ միայն ազգային գեղարվեստական մշակույթի մեջ, այլև կարևոր ներդրում է համաշխարհային դեկորատիվ-կիրառական արվեստի գանձարանում:

Պահպանված նմուշները հիացնում են գեղեցիկ զարդանկարներով, դրանցով ստեղծված հորինվածքներով, պատկերագրական բարդ բովանդակությամբ, արտահայտիչ տեսքով

Ինչպես հայ ժողովուրդն է ճակատագրի բերումով դեգերել երկրե-երկիր, այնպես նրա սիրած արվեստի հիասքանչ պատառիկները հայուհիների հետ անցել է՝գաղթի դաժան ճանապարհներով, տարածել ու զարգացել են այն ժողովուրդների մեջ, ովքեր ապաստան են տվել:

[1] https://arar.sci.am/dlibra/publication/287554/edition/264033/content

Հայուհու համար ասեղնագործությունը գեղեցիկի չափանիշ է, սեփական հմտությամբ ու վարպետությամբ մշակույթի արտահայտություն:
Այժմ բազմաթիվ աղջիկներ և կանայք առնչվում են հայկական ասեղնագործության ավանդական արվեստի նրբահյուս հմտությանը, բացահայտում՝ իրենց անհատականությունն ու հեգեկան ներդաշնակությունը:

1.1 ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական ասեղնագործ արվեստը իր ամբողջ հարստությամբ ու ոճով, ինչպես նաև

պատկերագրության ներքին բոնվանդակությամբ, հարազատություն ու նմանություններ ունի ճարտարապետական կառույցնփրի, խաչքարերի, գերեզմանաքարերի զարդաքանդակների, ինչպես նաև որմնանկարչության և մանրանկարչության զարդանկարային կառուցվածքի և գունային լուծման հետ:
Ասեղնագործ զարդարանքների որոշ տեսակներ յուրովի մոտենում են ոսկերչության, արծաթագործության արվեստին, մանավանդ, եթե վերջիններս բանված են զուգաթելի /ֆիլիգրան, թելկար/ տեխնիկայով:
Հայկական ասեղնագործ արվեստի ինքնատիպությունը, առանձնահատկությունները դարից դար ամուր պահպանվել են ժողովրդական լայն զանգվածների մեջ: Այդ արվեստի տարածումը հայրենիքում և այլ երկրներում կապված է հայ ժողովրդի պատմության հետ:
Հին հայկական ասեղնագործության [2] մասին վկայում են մատենագիրներ Ագաթանգեղոսը, Մովսես Խորենացին և ուրիշները: Միջնադարից պահպանվել են ասեղնագործ պատառիկներ, Անիի պեղումներով հայտնաբերվել են 12-13-րդ դարերի զգեստների, ծածկոցների մնացորդներ, ինչպես և ձեռագրերի կազմաստառեր,
15-րդ դարից՝ եկեղեցական զարդարանքներ և այլն:
Հայկական[3] ասեղնագործությունը զարգացել է 3 հիմնական ուղղություններով՝

---

[2] https://hy.m.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%8D%D5%B8%D5%BE%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_(Soviet_Armenian_Encyclopedia)_1.djvu/555

[3] Փրկված ձեռագրծների բացառիկ նմուշներ. Նարեկ Վան Աշուղաթոյանի անձնական հավաքածուն ցուցադրվում է - YouTube

- Ժողովրդական /գեղջկական տարազ/

- Քաղաքային /առևտրաարհեստավորական կենցաղ/

- Եկեղեցական

Արժեհամակարգի ձևավորման մեջ կարևորվում է <<Աստվածաշունչը>>՝ քրիստոնեական Սուրբ Գիրքը ժողովրդի հետ դարավոր ուղի անցնելով՝ նոր շունչ ու մարմնավորում է ստացել ասեղնագործված կտավի մեջ:

Ասեղնագործությունը տարածված էր Հայաստանի բոլոր շրջաններում, հատկապես Վան-Վասպուրականում, Շիրակ-Կարինում, Սյունիք-Արցախում, Արարատյան երկրում, Կիլիկիայում, Կեսարիայում, Կոստանդնուպոլսում ու Թիֆլիսում, Հայկական ասեղնագործության հրաշալի նմուշներ են ստեղծվել Ղրիմում, ԱՄՆ-ում և այլուր:

Հայտնի են նաև առանձին քաղաքների անուններով հիշատակված ասեղնագործություններ՝ Վանի, Մարաշի, Այնթափի, Կարինի, Տարսոնի և այլն:

Հայկական ասեղնագործ արվեստի մեջ հանդիպում են երկրաչափական, բուսական, կենդանական, ճարտարապետական, ինչպես նաև երկնային մարմինների ֆանտաստիկ ձևերի պարզ ու բարդ բովանդակություն ունեցող զարդանկարներ, պատկերագրություններ: Խաչքարերի, գորգերի և ասեղնաործ զարդարանքների նմանությունները հաճախ ընդգրկում են ամբողջ մակերեսի զարդանկարի կառուցվածքը: Եկեղեցական ասեղնաործությունները թե՝ պատկերագրությամբ և թե՝ գունային լուծմամբ մեծ նմանություն ունեն մանրանկարչության հետ: Պահպանելով հայ լուսավորչական կրոնի կանոնները, դրանք արտահայտում են միասնական առանձնահատուկ ոճ: Դարերի խորքից գալով ասեղնագործական նախշերը մշակվել են և ստացել են կատարյալ ձևեր:

1.2 ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Վանը հայկական կիրառական արվեստի միակ կենտրոններից է եղել, ուր պահպանվել են ժողովրդական ասեղնագործության հազարամյա ավանդույթներն ու վարպետությունը:

Վանի [4] կարի ժամանակ գործ է ածվում թեթև, երբեմն թափանցիկ կտավ, այն հաշվով, որ հնարավոր լինի կտավի թելերը հաշվել: Պատմիչների նկարագրությունից հայտնի է, որ գոհարներով, մարգարիտներով ասեղնագործված են եղել թագավորական և իշխանական հագուստները, ծածկոցները, թամբերը և այլ իրեր:

Վանը հարուստ է եղել ասեղնակարերով, օրինակ հայտնի Վանի կարը: Վանը հայտնի է եղել ժանյակի բոլոր տեսակներով: Նուրբ և աննման ասեղնագործ ժանյակների մեջ կենդանի են մնացել հատկապես կոսմոգենիկ, բուսական և երկրաչափական զարդամոտիվներ:

1.3 ՇԻՐԱԿ-ԿԱՐԻՆ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական ասեղնագործության պահպանված աշխարհիկ բնույթի ամենահին նմուշները 10-13-րդ դարերից են: Դրանցից են Անի քաղաքի պեղումների արդյունքում հայտնաբերված Հոնենց Տիգրանի փոքրիկ բարեկամուհու դամբարանի մետաքսյա հագուստը, բանված ոսկեթելերով:



Անիի ասեղնագործության մեջ գերակշռում են բարդ կարերը: Գաղթի [5] տարիներին այս շրջանների բնակչության մեծ մասը փրկվելով տեղափոխվեց Անդրկովկաս, սակայն շարունակեց զբաղվել կիրառական արվեստի բազմաթիվ ճյուղերով, այդ թվում՝ ասեղնագործությամբ: 19-րդ դարում Ալեքսանդրապոլում, Ախալցխայում և Թիֆլիսում գործում էին ոսկեթել ասեղնագործության մի շարք արհեստանոցներ:

[4] https://arar.sci.am/dlibra/publication/287554/edition/264033/content էջ 13-18
[5] https://arar.sci.am/dlibra/publication/287554/edition/264033/content էջ 19-22

1.4 ՍՅՈՒՆԻՔ-ԱՐՑԱԽԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի՝ Զանգեզուրի, Սիսյանի, Գորիսի, Ղափանի շրջաններն են ընդգրկված Սյունիքի[6] առսեղնագործության դպրոցում:

Ըստ հիշատակության ասեղնագործությունը բավական զարգացած է եղել Սյունիքում:

Պահպանված ամենահին ասեղնագործ զարդարանքը 17-րդ դարի է:

Սյունիքի հին ասեղնագործությունները կատարվել են աշխատատար կարերով, մետաքսաթելերով, ոսկեթելով՝ մարգարիտներով ու գոհարներով: 19-20-րդ դարերի ասեղնագործությունները նախորդ դարերի փայլը չունեն, սակայն հետաքրքրություն են ներկայացնում կարատեսակներով ու զարդանկարներով:

Սյունիքի կանացի հագուստը հարուստ չի եղել ասեղնագործությամբ: Ասեղնագործվել են վարտիքի եզրը՝ փողքակապը, շապիկի կուրծքը, ոսկեթելով ասեղնագործվել են գլխի թագը, ճակատակապը:

Սյունիքում տարածված են հնուց եկող վերադիր կոչվող կարերը, երեխայի հաբգեն-գրպանները, ծածկոցները, բոխչաները: Հաճախ տոսրկապ կոչվող բոխչաները կարված են եղել խճանկարային ասեղնագործությամբ նաև տարբեր գույնի կտորներից կազմված նախշերով:

1.5 ԱՐԱՐԱՏԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Արարատյան ասեղնագործությունները շքեղ են, կարված ոսկեթելերով,

փայլուններով, մարգարտով, ուլունքներով: 20-րդ դարի տեղական գեղջկական տարազը համարյա զուրկ է ասեղնագործությունից:

Արարատյան [7] ասեղնագործությունը ամենահարուստն է եկեղեցական զարդարանքներով:Արարատյան ասեղնագործ

[6] https://arar.sci.am/dlibra/publication/287554/edition/264033/content էջ 27-32

[7] https://arar.sci.am/dlibra/publication/287554/edition/264033/content էջ 33-43

դպրոցում այսօրել էջմիածնի տաճարն իր շրջապատի եկեղեցիների հետ առանձնակի տեղ է գրավում: Ամեն տարի երկրի տարբեր մասերից ուխտի եկածներ նվերներ են բերում, որոնք իրենց գեղարվեստական տեսքով, ասեղնակարերի բարդ ձևրով , օգտագործված նյութի՝մետաքսի, ոսկեթելի, թանկագին ակների, մարգարիտների արկայությամբ եզակի գործեր են:

1.6 ՈՒՐՖԱՅԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Ուրֆա,Ուռհա քաղաքը կամ պատմական Եդեսիան գտնվում է միջագետքի հյուսիսում՝ Մեծ Հայքի հարավ-արևմտյան կողմում:

Երբեմնի արհեստներով հարուստ Ուրֆայի մշակույթը այսպիսով շարունակեց ապրել՝



վերապրածների միջոցով մեզ հասցնելով Ուֆայի չքնախ ասեղնագործությունը:Այսօր էլ ձեռագործը հալեպի հայ ասեղնագործուհիների ընտանեկան ավանդույթի մաս է կազմում:

Ուրֆայի ասեղնագործությունը[8] հիմնականում բնորոշ են ոճավորված բուսածաղկային մոտիվներն ու թռչունների պատկերները:

Հայաստանի ազգային պատկերասրահում են պահվում Ուրֆայի հայ կանանց ասեղնագործության երկու ալբոմ, որը հանձնվել է Որֆայեցի Սաթենիկ Բիզիկյանի կողմից, ով ամուսնու հետ 1947թ. ներգաղթել էր Խորհրդային Հայաստան: Ուրֆա քաղաքը պատմության մեջ հայտնի է նաև Եդեսիա անունով: Ուրֆայի զարդամոտիվներում գերիշխում են տերևազարդ ծաղիկներ, պարզեցված և ոճավորված: Գույները մեղմ են, հաճախ զուգակցված ոսկեթել բանվածքով:

Ուրֆայի հայ կանանց ասեղնագործական արվեստը հետաքրքիր է նաև այն ընդհանրություններով, որ ունեն հայկական ավանդական կիրառական արվեստի այլ ճյուղերը:

Ասեղնագործությունների հապճեպով, երբեմն անխնա կտրված լինելը մեզ ուղղում է հետևյալ ենթադրությանը: Հավանաբար Ուրֆայից փախչելիս, ձեռագործերի զարդաձևերը փրկելու մտահոգությամբ, Սաթենիկը արագորեն կտրատել է ձեռքի տակ եղած ձեռագործերը, յուրաքանչյուրից վերցնելով մի կարևոր մաս: Նա ըստ

[8] Ուրֆայի ասեղնագործություն | Ոսկե բիլազուկ (wordpress.com)

երևույթին մտածել, որ, ինչպես զարդանկարներից օգտվելով կարելի է վերականգնել կորստյան մատնված աշխատանքները:
Ամենայն հավանականությամբ ամբողջական ձեռագործները փրկելու հնարավորություն չի ունեցել:

1.7 ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի մշակույթի ասպարեղում մեծ տեղ է գրավել Վրաստանը և նրա նայրաքաղաք Թիֆլիսը, որի հետ կապ են ունեցել նաև հյուսիսային Կովկասի բնակավայրերը: Թբիլիսին[9] հայ արվեստի համար շատ յուրահատուկ օջախ է, որ

հնուց ի վեր զարգացել են հայ ժողովրդի արհեստները:Շքեղորեն ապրող մեծ քաղաքի հարուստների ասեղնագործ զարդարանքները կատարում էին հայ չքավոր կանայք և աղջիկները: Հայ ասեղնագործուհիները պատրաստում էին կենցաղային զարդարանքներ՝ ճակատակալ, ժանյակ, կրծկալ և այլն: Մինչև 20-րդ դարի առաջին քառորդը հայկական կուսանոցի աղջիկները զբաղվում էին ոսկեթել, մետաքսաթել ասեղնագործությամբ: Առանձնապես գեղեցիկ և աշխատատար էին սպիտակ կտորի վրա սպիտակ թելով կատարված հարթակարերը և թելքաշը, նման Վանի, Անյութապի հայկական զարդարանքներին:
Թբիլիսիում բնակվող հայ ասեղնագործուհիների թիվը չափազանց մեծ է եղել, որոնց մի մասը մասնագիտացած էր թանկարժեք սպիտակեղենի ասեղնագործության մեջ, մյուս մասն էլ՝ վարագույրների, սփրոցների, բարձերի և այլն:
19-րդ դարի վերջին և 20-րդի սկզբին Թբիլիսիի ասեղնագործությունը հասել էր բարձր կատարելության:

[9] https://arar.sci.am/dlibra/publication/287554/edition/264033/content
էջ 55-56

1.8 ՄԱՐԱՇԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Կիլիկյան Հայաստանի քաղաքներից Մարաշը՝ Գերմանիկը, իր հարակից բնակավայրերով նշանավոր է իր ասեղնագործությամբ:



Համաշխարհային պատերազմից հետո հրաշքով փրկված Մարաշցիները պատսպարվեցին Սիրիայում, Լիբանանաում, Եգիպտոսում: Տառապյալ կյանքի ճանապահներին նրանք կորցրին իրենց գույքը, հարստությունը, սակայն պահպանեցին աշխատասիրությունը, վարժ ձեռքերի ունակությունները, վարպետությունը՝ գոյատևման ազդակները:



Երկու խմբի են բաժանվում Մարաշին բնորոշ ասեղնագործ աշխատանքներ: Առաջին հարթակարն է /Զեյթունի կար կամ կոթ ասեղ, աթլասլամա/, երկրորդը գաղտնակարն է, հյուսած կար, որ կոչվում է նաև իրկա: Այս երկրորդն է, որ շատ բնորոշ է Մարաշին[10]:



Մարաշի ասեղնագործության հետաքրքիր տիպ են ներկայացնում հյուսած կարով ասեղնագործված ռոմբավոր գորգերն ու սփրոցները:Այժմ Հայաստանի թանգարաններում ևս կան Մարաշի զարդարանք-ասեղնագործությունները: Հատկապես ամենատպավորիչներից են հարթակար աթլասլամա գորգերը, որոնք ունեն գունային և կառուցվածքային մեծ արտահայտչականություն: Հարթակար սփրոցների դեպքում ևս հաճախ են հանդիպում կանոնավոր եզրանախշերը, կենտրոնում խոշոր արևի խորհրդանիշներ և վարդյակներ, չորս անկյուններում քառորդ կլոր, լուսաձև մոտիվներ և աստղիկներ:

Զարդանախշերում հաճախ հանդիպող 5 նշանը Մարաշի [11] չափազանց կարևոր է մշակութաբանության տեսակետից: Վիշապի կամ օձի ամենապարզ ձևը հիշեցնող այս նշանը:

Մարաշի[12] ասեղնագործության մեջ օժտված է նաև թևիկներով: Վիշապը հանդես է գալիս որպես կենաց ծառի պահապան և նրանցով է ձևավորվում զարդապատկերները:

[10] https://arar.sci.am/dlibra/publication/330550/edition/302402/content էջ 5-20

[11] MARASHI HARTAKAR - ՄԱՐԱՇԻ ՀԱՐԹԱԿԱՐ - YouTube

[12] Մարաշի ասեղնագործություն. եռանկյուն (ձախլիկների համար) - YouTube

Այսօր գերակշիռ մեծամասնությամբ <<Մարաշի գործը ու իր երկու ձևերով կատարում են թավիշի լավագույն տեսակների վրա:
Պատահում են հարթակար աշխատանքներ, որոնց մեջ օգտագործվել են և բամբակե և բրդե թելեր: Աշխատանք սկսելու համար անհրաժեշտ էր ընտրել հորինվածքը և գծագրել կտորի վրա:

1.9 ԱՅՆԹԱՊԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Այնթապի[13] ասեղնագործության պատմությանն ու ավանդույթներն անփոփոխ նոր երկիատորյակ է հրապարակվել, որի հեղինակը Հալեպի Մ. Սարյանի անվան ակադեմիայի ուսուցիչ Հրազդան Թուքմաջյանն է:



Երևանի Մատենադարանում <<Այնթափի օրեր>> ծրագրի շրջանակում տեղի են ունեցել գրքի շնորհանդես <<Այնթափի ինքնատիպ ձեռագործ աշխատանքներից բաղկացած ցուցահանդեսի բացումը>>:

[13] «Այնթապի ասեղնագործությունը» գրքի շնորհանդեսը Մատենադարանում - YouTube

ԳԼՈՒԽ 2. Ասեղնակարերի տեսակները

<<Մայրս ինձ ասաց,-արհեստի գնա, արհեստտ սովորիր,
մի լինի նազուկ, արհեստն է մարդուն ոսկի բիլազուկ>>:
Հովհաննես Շիրազ

Ասեղնագործությունը[14] դեկորատիվ-կիրառական արվեստի տեսակ է՝ հագուստը, կենցաղային առարկաները զարդարելու, դեկորատիվ պանոններ ստեղծելու համար: Ասեղնագործ աշխատանքները ստեղծվում են ասեղով, երբեմն՝ հելյունով, ասեղնագործվող մեքենայով՝ բամբակե, վուշե, մետաքսե, բրդե թելերով, օգտագործում են նաև ուլունքներ, մարգարիտ, ոսկեթել և այլն:

Ասեղնագործությունը[15] լինում է 2 տեսակ՝ կտորը, կտորի վրա ձգվող վերադիր Ասեղնագործությունը հնագույն ծագում ունի: Սկզբում օգտագործել են բույսի փշերից կամ ձկան ոսկորից, ապա՝ փայտից, փղոսկրից, մետաղից սարքած ասեղները: Հայկական ասեղնագործ արվեստի մեջ հանդիպում են երկրաչափական, բուսական, կենդանական, ճարտարապետական, ինչպես նաև երկնային մարմինների

ֆանտաստիկ ձևերի պարզ ու բարդ բովանդակություն ունեցող զարդանկարներ, պատկերագրություններ: Խաչքարերի, գորգերի և ասեղնաորժ զարդարանքների նմանությունները հաճախ ընդգրկում են ամբողջ մակերեսի զարդանկարի կառուցվածքը: Եկեղեցական ասեղնաորժությունները թե՝ պատկերագրությամբ և թե՝ գունային լուծմամբ մեծ նմանություն ունեն մանրանկարչության հետ: Պահպանելով հայ լուսավորչական կրոնի կանոնները, դրանք արտահայտում են միասնական առանձնահատուկ ոճ: Դարերի խորքից գալով ասեղնագործական նախշերը մշակվել են և ստացել են կատարյալ ձևեր:

[14] Փրկված ձեռագործների բացառիկ նմուշներ. Նարեկ Վան Աշուղաթոյանի անձնական հավաքածուն ցուցադրվում է - YouTube
[15] ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 5-7 դասարաններ ՈՒՍՈՒՑՉԻ ՁԵՌՆԱՐԿ - Գրքի ներբեռնում | 1-50 էջեր | FlipHTML5

2.1 ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐ

Ասեղնագործությունը կատարվում է ասեղով՝ միագույն կամ բազմագույն թելերով: Ասեղնագործությա[16]ն մեջ օգտագործվում են տարբեր տեսակի գործվածքներ, թելեր և ասեղներ:

Ասեղ-ասեղները լինում են տարբեր երկարության N1-ից մինչև 12-ը: Կարի ձեռագործ աշխատանքի համար անհրաժեշտ է ունենալ ասեղների հավաքածու:

Կտոր-ասեղնագործության համար կարելի է օգտագործել ամեն տեսակի կտորեղեն՝ քաթան, կտավ, բարխատ, մետաքս, տրիկոտաժեղեն և այլն:

Թել- օգտագործում ենք տարբեր տեսակի թելեր՝ բամբակյա, մուլինել, բրդյա, վուշե, ոսկյա, կապրոնե, արծաթյա թելեր:
Լվացման ենթակա ձեռագործների համար պետք է օգտագործել գույնը չթափվող թելեր

Մկրատ-կարևոր է ունենալ երկու տեսակի մկրատ՝ մեծը, որով կտորեղեն է կտրվում և մյուսը փոքր ու սրածայր,որով ասեղնագործվող կտորի ավելորդություններն են կտրվում:

[16] ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 5-7 դասարաններ ՈՒՍՈՒՑՉԻ ՁԵՌՆԱՐԿ - Գրքի ներբեռնում | 1-50 էջեր | FlipHTML5

Մատնոց-օժանդակ, միջոցներից մեկը մատնոցն է որի մի քանի տեսակներից նախընտրելին մետաղից պատրաստվածն է: Այն հագցվում է աջ ձեռքի միջնամատին:

Պատճենահանման թուղթ-կարևոր միջոցներն են՝ ընդօրինակելու համար պատճենահանման թղթերը, նախշը կտորին փոխանցելու համար:

2.2 Ձեռքի կարի մի քանի տեսակներ

<<Ուզում ես վարպետ դառնալ, հմտություններ ձեռք բեր մանկուց>>:

Շիլլեր

Հագուստ[17] կարելու համար հարկավոր է դետալները կարել, միացնել իրար: Կարերը լինում են երկու տեսակ՝ ձեռքի և մեքենայի:

Դիտարկենք ձեռքի[18] կարի մի քանի տեսակներ՝







- **Շուլուլակար /բլանդ/**- այս կարն ամենատարածվածն է, այն կիրառվում է կարվող հագուստի մասերը չափափորձելու կամ արդուկելու ժամանակ, ժամանակավորապես ամրացնելու համար, իսկ մեքենակարելուց հետո այն պետք է քանդել:
- **Մեքենայակար**-սա ամենաամուր կարն է:
- **Դարձկար**-այս կարը նման է մեքենայակարին, պարզապես կարերն իրարից հեռու է արվում:
- **Պատճենահանման կար**-շուլուլվում է շատ թույլ, որից հետո մկրատով կտրել այնպես, որ կտորների վրա մնա ու պահպանվի պատկերը կամ այն ինչ նշել ենք:

[17] Ձեռքի կարի մի քանի տեսակներ | Ոսկե բիլազուկ (wordpress.com)

[18] ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 5-7 դասարաններ ՈՒՍՈՒՑՉԻ ՁԵՌՆԱՐԿ - Գրքի ներբեռնում | 1-50 էջեր | FlipHTML5

2.3 Զարդակարեր

Զարդակարեր-բաց [19] ի ձեռքի կարերից, կան նաև զարդակարեր, որոնք կիրառվում [20] են հագուստի արտաքին մասի վրա, ավելի գեղեցկացնելու , որոշ դեպքերում նաև ամրացնելու համար:

- Պարկար /եզրակար/



- Օղակակար /շղթայակար/

- Եղևնակար



- Խաչկարեր

- Մերիշկա կամ թելքաշ



- Տերևակարեր



[19] Результат поиска картинок (google.com)

[20] Ասեղնակարը՝ հասարակ կարից մինչև բարդ զարդակարեր, անցել են երկար ճանապարհ ու հասել մինչ մեր օրեր: ☺ ❗Հետաքրքիր է, որ ասեղնակարերի կատարումով,... | By ARAR Armenian National Art Center «Արար» հայ ազգային արվեստի կենտրոն | Facebook

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ուսումնասիրելով ասեղնագործություն թեման և հաշվի առնելով իմ սեփական փորձը դասավանդման ընթացքում, հանգեցի այն եզրակացությանը, որ այն ասեղնագործությունը, չի կորցրել իր արդիականությունը և օգտագործվում է հագուստի, սփրոցների, վարագույրների և այլ առարկաների գեղազարդման համար: Ժամանակի ընթացքում ասեղնգործության պարզ ձևրեը կատարելագործվել են: Ասեղնագործ իրերը մեծ պահանջարկ ունեն և բարձր են գնահատվում: Այդ պատճառով կարևոր է մատաղ սերնդի մեջ սեր սերմանել մեր ազգային արժեքների հանդեպ: Քանզի հայկական ասեղնագործությունը ժողովրդի սեփականությունն է ու վկան է մեր անցյալի գեղարվեստական հարստություն: Ասեղնագործության հայկական ավանդույթները շարունակվում են մինչև օրս: Դրան զուգահեռ ողջ աշխարհում ևս չի մարում ասեղնագործության հանդեպ հետաքրքրությունը: Ասեղնագործության և ասեղնագործելու արվեստի լավագույն միջոցն ու դրսևորման եղանակը հանդիսանում է դպրոցները, որոնց շնորիվ մեր աշակերտները առնչվում են հայկական ասեղնագործության արվեստի նրբահյուս հմտությանը, բացահայտում՝ իրենց անհատականությունն ու հոգեկան ներդաշնակությունը: Անհատական է խմբային աշխատանքները, ժամանակակից ուսուցման մեթոդներն ու հմտությունները հնարավորություն են տալիս առանձնահատուկ նրբությամբ, մանրակրկիտությամբ, գունային ներդաշնակ համադրումներով, տեխնիկական վարպետությամբ և անշուշտ՝ սիրով ու համբերությամբ սովորեցնել աշակերտներին ասեղնագործելու ուրույն տեխնոլոգիան, արվեստն ու լեզուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



1.5-7-րդ դասարան <<Տեխնոլոգիա»Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ.Աղաջանյան, Լ. Վերդյան:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 5-7 դասարաններ ՈՒՍՈՒՑՉԻ ՁԵՌՆԱՐԿ - Գրքի ներբեռնում | 1-50 էջեր | FlipHTML5

2. Հայկական Սովետական Հանրագիտարան, առաջին հատոր, Երևան 1974, 720 էջ:

Էջ:Հայկական Սովետական Հանրագիտարան (Soviet Armenian Encyclopedia) 1.djvu/555 — Վիքիդարան (wikisource.org)

3. Ս.Դավթյան, «Հայկական ասեղնացործություն» մի հին նմուշ, Երևան 1972, 64 էջ:

https://arar.sci.am/dlibra/publication/287554/edition/264033/content

4. Ա. Պատրիկ «Ուրֆայի ասեղնագործություն», Երևան 1985:

Ուրֆայի ասեղնագործություն | Ոսկե բիյագուկ (wordpress.com)

5. Ս. Դավթյան «Մարաշի ասեղնագործություն», Երևան 1978, 56 էջ: 7. Ս. Գալստյան Լ. Մխիթարյան, «Հայկական միջնադարյան զարդարվեստ»:

https://arar.sci.am/dlibra/publication/330550/edition/302402/content

6. Հ.Թոքմանջյան Այնթապի ասեղնագործություն Հալեպ Երևան 2015

«Այնթապի ասեղնագործությունը» գրքի շնորհանդեսը Մատենադարանում - YouTube

: